ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Մարինե Շիշյան, ՀՀ ֆինանսների նախարարության Բյուջետային գործընթացի համակարգման վարչության հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Ռիգա (Լատվիայի Հանրապետություն), 2024 թվականի հուլիսի 15-ից մինչև հուլիսի 19-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

ԵԱՀԿ SIGMA ծրագրի շրջանակներում Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ համատեղ կազմակերպվող «Հանրային ծառայության աշխատանքի վարձատրության համակարգերը և դրանց բարեփոխումները» թեմայով աշխատաժողովին մասնակցելու նպատակով:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են հանրային ծառայության համակարգում վարձատրության հիմնական սկզբունքներն ու միտումները, որոնք մշակվել են ԵԱՀԿ SIGMA ծրագրի կողմից: Ներկայացվել են աշխատաժողովի մասնակից երկրներում հանրային ծառայության աշխատանքի վարձատրության գործող համակարգերը, դրանց բարեփոխման ուղղությունները, ինչպես նաև Ուկրաինայում և Լատվիայի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության համակարգերի վերջին բարեփոխումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի մասնակիցների կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական կարգավորումները, հանրային ծառայության ոլորտում աշխատանքի վարձատրության գործող համակարգը, հիմնական սկզբունքները, աշխատավարձի կառուցվածքը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Աշխատաժողովի շրջանակներում ընդունված որոշումներ, պայմանավորվածություններ և ստորագրված փաստաթղթեր չկան:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատանքների ընթացքում ԵԱՀԿ SIGMA ծրագրի կողմից ներկայացվել է իրենց կողմից մշակված վարձատրության համակարգի բարեփոխումների մեթոդական ուղեցույցը՝ ԵՄ արևելյան գործընկերության երկրներում իրականացվող հանրային կառավարման բարեփոխումների համատեքստում վարձատրության համակարգերի բարեփոխման նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մարինե Շիշյան 23.07.2024թ.